

Մասնագիտություն- 0515«Ձարդակիրառական արվեստ»	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	«Փայտի գեղարվեստական փորագրող»
I. Դերը՝	Փայտի գեղարվեստական փորագրողը գեղարվեստական իրերի, կահույքի պատրաստման ձեռնարկություններում, ինչպես նաև անհատ ձեռներերությամբ զբաղվելիս կատարում է փայտի վրա համապատասխան գծանշումների, զարդանախշերի, գեղարվեստական փորագրման, հատումներով, փորակումներով և փորագրումներով գեղարվեստական իրերի պատրաստման աշխատանքներ:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Փայտանյութի ընտրություն, տեսակների և հատկությունների, հիմնական կտրվածքների տարբերակում, արատների չափերի և խոնավության աստիճանի որոշում:	
Աշխատանքային գործընթացը	Ընտրում է փայտանյութը կամ նախապատրաստվածքը պարզաբանում է հիմնական կտրվածքները, կառուցվածքային հիմնական տարրերը, հատկությունները, արատները, տարբերակում ըստ տեքստուրայի փայտանյութի տեսակները, որոշում արատների տեսակները, դրանց վերացումը կախված արատների չափերից, խոնավության տոկոսը:
Կատարման չափանիշներ	Փայտանյութը ճիշտ է ընտրված, հիմնական կտրվածքները, կառուցվածքային հիմնական տարրերը, հատկությունները, արատները ճիշտ են պարզաբանված, ըստ հիմնական տեքստուրայի, հատկությունների փայտանյութի տեսակները ճիշտ են տարբերակված, արատների տեսակները ճիշտ են որոշված, կախված արատների չափերից դրանք ճիշտ են հեռացված:
Խնդիրների բնագավառ 2. Երկրաչափական տարրերի չափանշում, գծանշում, նախապատրաստվածքի վրա համապատասխան տրամատի, էքքիզի տեղակայում	
Աշխատանքային գործընթացը	Չափանշում և գծանշում է երկրաչափական տարրերը նախապատրաստվածքի վրա՝ ըստ անհրաժեշտ մասշտաբի, պատկերում է տրված նկարը, էքքիզը ըստ նախապատրաստվածքի տրամատային չափերի, տեղակայում է նախապատրաստվածքի վրա:
Կատարման չափանիշներ	Չափանշում և գծանշման գործիքներով նախապատրաստվածքի վրա երկրաչափական տարրերի չափանշումները, գծանշումները ճիշտ են կատարված, նկարը, էքքիզը ըստ նախապատրաստվածքի տրամատային չափերի ճիշտ է պատկերված, նկարը, էքքիզը ճիշտ են տեղակայված նախապատրաստվածքի վրա:
Խնդիրների բնագավառ 3. Երկրաչափական գծագրության հիմնական տարրերի հարթական և աքսոնոմետրիկ պատկերում:	
Աշխատանքային գործընթացը	Պատկերում է երկրաչափական հիմնական տարրեր, հատվածը, շրջանագիծը հավասար մասերի, կատարում լծորդումներ, գտնում շրջանագծի աղեղի կենտրոնը, պատկերում կանոնավոր բազմանկյուններ, երկրաչափական պատկերների պրոյեկցիաներ և աքսոնոմետրիկ

	պատկերներ, հիմնական հարթությունների և պարզագույն երկրաչափական մարմինների հատման գծեր:
Կատարման չափանիշներ	Փոխադարձ ուղղահայաց և զուգահեռ ուղիղները ճիշտ են կառուցված, ըստ պայմանի հատվածների և անկյունների բաժանումները ճիշտ են կատարված, հարթ պատկերները ճիշտ են պատկերված, շրջանագծի աղեղի կենտրոնը ճիշտ է որոշված, շրջանագիծը ըստ պայմանի հավասար մասերի ճիշտ է բաժանված, լծորդումները ճիշտ են կատարված, կանոնավոր բազմանկյունները ճիշտ են պատկերված, պարզագույն երկրաչափական պատկերների պրոյեկցիաները և աքսոնոմետրիկ պատկերները ճիշտ են կառուցված, հիմնական հարթությունների և պարզագույն երկրաչափական մարմինների հատման գծերը ճիշտ են պատկերված:
Խնդիրների բնագավառ 4. Փայտանյութի հիմնական կտրվածքներով փորագրման աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	Աշխատատեղի նախապատրաստում, հատման և փորման գործիքների, օժանդակ նյութերի ընտրություն/արատների վերացման կարողության ձևավորման նպատակով, հիմնական հարմարանքների տեսակների, նախապատրաստվածքի տեղակայում փայտանյութի հիմնական կտրվածքների վրա, փայտանյութի նախապատրաստվածքի վրա երկկողմանի հանվածքով փորման աշխատանքներ՝ պահպանելով անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	Աշխատատեղը ճիշտ է նախապատրաստված, փորագրողի հիմնական և օժանդակ նյութերի, գործիքների, հարմարանքների տեսակները ճիշտ են ընտրված, անվտանգության կանոնները պահպանված են:
Խնդիրների բնագավառ 5. Երկրաչափական փորվածքների հիմնական տարրերի փորագրում	
Աշխատանքային գործընթացը	Ընտրում է երկրաչափական փորվածքների հիմնական տարրերի փորագրման չափանշման, գծանշման, փորակման գործիքները, կատարում է չափանշումներ, գծանշումներ, փորակում երկրաչափական փորվածքների հիմնական տարրերի փորագրումներ, պահպանել անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	Երկրաչափական փորվածքների հիմնական տարրերի փորագրման չափանշման, գծանշման, փորակման գործիքների տեսակները ճիշտ են ընտրված, չափանշումները և գծանշումները, երկրաչափական փորվածքների հիմնական տարրերի փորագրումները ճիշտ են կատարված, անվտանգության կանոնները պահպանված են:
Խնդիրների բնագավառ 6. Հարթփորվածքային փորագրում	
Աշխատանքային գործընթացը	Ընտրում է հարթփորվածքային չափանշման, գծանշման, փորակման գործիքները, կատարում է չափանշումներ, գծանշումներ, փորակում է հարթփորվածքային փորվածքների տեսակներով փորագրումներ, պահպանում է անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	Հարթփորվածքային չափանշման, գծանշման, փորակման գործիքների տեսակները ճիշտ են ընտրված, չափանշումները և գծանշումները, հարթփորվածքային փորագրումները ճիշտ են կատարված, անվտանգության կանոնները պահպանված են:
Խնդիրների բնագավառ 7. Հարթաքանդակային փորվածքների փորագրում	

Աշխատանքային գործընթացը	Ընտրում է հարթաքանդակային փորագրման չափանշման, գծանշման, փորակման գործիքները, կատարում է չափանշումներ, գծանշումներ, կատարում է հարթաքանդակային փորագրումներ:
Կատարման չափանիշներ	Հարթաքանդակային փորվածքների չափանշման, գծանշման, փորակման գործիքները ճիշտ են ընտրված, չափանշումները և գծանշումները, հարթաքանդակային փորագրումները ճիշտ են կատարված, պահպանված են անվտանգության կանոնները:
Խնդիրների բնագավառ 8. Միջանցիկ վրադիրով և հեռացված խորքապաստառով փորագրում:	
Աշխատանքային գործընթացը	Ընտրում է հարթելեֆային փորագրման չափանշման, գծանշման, փորակման գործիքները, կատարում է չափանշումներ, գծանշումներ, փորակում միջանցիկ վրադիրով և հեռացված խորքապաստառով փորագրումներ:
Կատարման չափանիշներ	Միջանցիկ վրադիրով և հեռացված խորքապաստառով փորվածքների չափանշման, գծանշման, փորակման գործիքների տեսակները ճիշտ են պարզաբանված, չափանշումները և գծանշումները, միջանցիկ վրադիրով և խորքապաստառը հեռացված փորագրումները ճիշտ են կատարված:
Խնդիրների բնագավառ 9. Փորագրման վերջնամշակում:	
Աշխատանքային գործընթացը	Ընտրում է փորագրման վերջնամշակման՝ գունապատում, մոմապատում, լաքապատում, ողորկում, դրվագում եղանակը, կատարում վերջնամշակում:
Կատարման չափանիշներ	Ճիշտ է ընտրված վերջնամշակման՝ գունապատում, մոմապատում, լաքապատում, ողորկում, դրվագում, եղանակները, վերջնամշակման աշխատանքները ճիշտ են կատարված:
Խնդիրների բնագավառ 10. Փորագրվածքի նորոգում:	
Աշխատանքային գործընթացը	Որոշում է փորագրվածքի վնասվածությունը, կատարում է վերանորոգման և վերջնամշակման աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	Ճիշտ է որոշված փորագրման վնասվածքի վերացման համար նախատեսվող գործառույթները, ճիշտ է կատարված վերանորոգման, վերջնամշակման աշխատանքները:
III. Պատասխանատվությունը	Աշխատատեղի նախապատրաստում և սպասարկում, աշխատանքային գործիքների, նախապատրաստվածքի ընտրում և տեղադրում դազգահի սեղանածածկի վրա, գեղարվեստական իրերի վրա փորագրումների կատարում, աշխատանքում կամ ուսման գործընթացում առաջադրանքների կատարման համար անձնական պատասխանատվության ստանձնում. որոշ դեպքերում ավելի ցածր որակավորում ունեցող աշխատողների կողմից կատարված աշխատանքի համար պատասխանատվության ստանձնում:
IV. Լեզուները	Հայերենի, օտար լեզվի (բավարար) իմացություն
V. Համակարգիչը	WORD և փայտի գեղարվեստական փորագրությանը, գծանկարին, կոմպոզիցիային վերաբերող ծրագրերով աշխատելու իմացություն (COREL DRAW) ծրագրեր:
VI. Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> • Հայկական համաշխարհային զարդարվեստի նմուշների վերաբերյալ իմացություն: • Մասնագիտական գործիքների, սարքավորումների, հաստոցների

	<p>աշխատանքային ձևերի իմացություն:</p> <ul style="list-style-type: none"> • Գծագրական, գծանկարային, կոմպոզիցիոն, քանդակային աշխատանքներ կատարելու հիմունքների իմացություն: • Դրվագման համար անհրաժեշտ նյութերի առանձնահատկությունների մասին իմացություն: • Աշխատանքի անվտանգության, հակահրդեհային և քիմիական նյութերով աշխատելու անվտանգության ընդհանուր կանոնների իմացություն: • Շրջակա միջավայրի պահպանության և չաղտոտելու իմացություն
<p>VII.Կարողությունները և հմտությունները</p>	<p>Պարզ երկրաչափական հարթական և աքսոնոմետրիկ կառուցումներ կատարելու, փայտատեսակներ ճանաչելու, աշխատատեղը նախապատրաստելու և սպասարկելու, ըստ փորագրման տեսակների փորակման գործիքներ ընտրելու, նախապատրաստվածքը դազգահի վրա տեղակայելու, փորակման, չափանշման, գծանշման, զարդանախշի համապատասխանեցման նախապատրաստվածքի տրամատի և տեղակայման, փորագրման տեսակների տարբերակման և փորակումներ կատարելու, փորագրված շինվածքի վերջնական մշակում իրականացնելու, աշխատավայրում, աշխատատեղում և աշխատանքներ իրականացնելու ժամանակ անվտանգության և հակահրդեհային կանոնները պահպանելու կարողություններ:</p>
<p>վերաբերմունք</p>	<p>Աշխատանքային կարգապահության, գիտելիքների, հմտությունների և ունակությունների անընդհատ ուսուցում.</p> <ul style="list-style-type: none"> ➤ մասնագիտական ոլորտի մասին ընդհանուր գիտելիքներ և դրանց կիրառելու կարողություն աշխատանքային գործունեության ընթացքում, ➤ մասնագիտական տերմինաբանության ճիշտ ընկալում և կիրառում, ➤ մասնագիտական գործիքների, սարքավորումների, հարմարանքների և նյութերի արդյունավետ և նպատակային օգտագործում, ➤ մասնագիտական կատարելագործման նպատակով անհրաժեշտ տեղեկությունները ընտրելու և համապատասխան աղբյուրներից օգտվելու հմտություն, ➤ աշխատանքային խնդիրների լուծման ընթացքում պատասխանատվություն ստանձնելու, հիմնավորված լուծումներ գտնելու կարողություն: